



**ՎԵՀԱՓՍՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՐ  
Տ. ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆԻՆ ԵՎ  
Տ. ՇԱՀԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԺԵՄՅԱՆԻՆ  
ԱՐՔԻԵՊԻՍԿՈՍ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ  
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ՝ ՏԵԱՌԻՆ ԵՂԻՇԷԻ ՍՐԲԱԶԱՆ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆՆԵՐԻ ՍԻՐՈՅ ՈՂԶՈ՞ՅՆ ԵՒ  
ՕՐՀՆՈՒԹԻՂԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

**Ս. Երուսաղէմ**

Քաղցր զգացումներով ընդունեցինք Ձեր 12 յուլիս 1972 թուակիր նամակը, որով Մեզի կը ներկայացնէիք սուրբ Աթոռիդ երկու եպիսկոպոսներու՝ գերոշնորի տ. Նորայր Պողարեան և տ. Ծահէ Աճէմեան սրբազան հայրերու երկար տարիներու անխոնջ ծառայութիւնը և բեղուն գործնէութիւնը, առաջարկելով որ Մեր հայրապետական գնահատանքը արտայայտենք «արքութեան» պատիւ շնորհելով անոնց:

Արդարև, տ. Նորայր և տ. Ծահէ սրբազան հայրերը ծանօթ են մեր ամբողջ եկեղեցիին ու ժողովուրդին, իրենց նուիրեալ կեանքով, իրենց փայլուն շնորհներով, իրենց մատենագիտական, գրական ու կրթական վաստակով, որով Մեր անկեղծ գնահատանքի առարկան կը հանդիսանան:

Արդ, Մենք սիրով կ'ընդառաջենք Ձեր առաջադրանքին և տ. Նորայր եպիսկոպոս Պողարեանին ու տ. Ծանէ եպիսկոպոս Աճէմեանին կը շնորհենք «արքութեան» պատիւ, մաղթելով որ արքայական հայրերը, այժմ արքեպիսկոպոսներ, քաջառողջ ապրին ու գործեն մինչև խոր ծերութիւն, միշտ ծառայելով մեր սուրբ եկեղեցիին, միշտ ծառայելով առաքելական ձեր սուրբ Աթոռին, միշտ ծառայելով հայ մատենագրութեան և դպրութեան:

Այս երջանիկ ստիթով, սիրեցեալ Եղբայր Մեր, թոյլ տուէք շնորհատրել Ձերդ Ամենապատուութիւնը, մաղթանքով արտաբովս, որ յաւէտ անասան մնայ հայ Երուսաղէմը և Դուք տակաւին երկար, շատ երկար տարիներ շարունակէք Ձեր առաքելութիւնը, Ձեզի յատուկ վճիտ ու վճռական ոգիով:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդրութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգոյն սրբոյ» (Հոռմ. ԺԵ 13).  
ամէն:

*Կապույտ Թ*

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնքակս ի 12-ը սեպտեմբերի  
1978 փրկչական ամի,  
ես ի տումարիս հայոց ՌՆԻԲ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 758

